

ԵՐԵՎԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ «ՊՍԱԿ» ՇԱՐՎԱԹԱԹԵՐԹԸ

(լույսընծայման 120-ամյակի առթիվ)

Ս. Ս. ՆԱԶԱՐՅԱՆ

Բազմահարուստ հայ պարբերական մամուլը մեր ժողովրդի ճակատագրի բերումով սկիզբ է առել ու զարգացել հայրենիքի սահմաններից դուրս՝ օտար ափերում:

Չայ մամուլի առաջնեկի՝ «Ազդարարի» ծննդից (1794, Մադրաս) ութ տասնամյակ անց միայն, 1880 թվականին մայր հայրենիքում՝ Երևանում, լույս աշխարհ է եկել առաջին հայ պարբերականը՝ «Պսակ» շաբաթաթերթը, որով և սկզբնավորվել է Երևանի մամուլի պատմությունը:

Երևանում առաջին պարբերականի հիմնադրման նախաձեռնողը եղել է ազատասիրական գաղափարներով ներշնչված, եվրոպական համալսարաններում կրթություն ստացած, առաջադեմ մտավորական Վասակ Պապաջանյանը: Այդ երախտավոր գործչի մասին շատ քիչ տեղեկություններ են հրապարակվել: Ուստի անհրաժեշտ է ներկայացնել նրա կյանքի և գործունեության համառոտ նկարագիրը¹:

Վասակ Պապաջանյանը ծնվել է Երևանում, 1847 թվականին: Թիֆլիսի դասական գիմնազիան ավարտելուց հետո ուսումը շարունակելու նպատակով նա մեկնել է Գերմանիա, սովորել Չեյդելբերգի, Բոննի, Լայպցիգի համալսարաններում: Փիլիսոփայության դոկտորի աստիճան ստացած նա վերադարձել է Երևան և Ղարաբաղի թեմակալի փոխանորդ Արիստակես Սեդրակյանի առաջարկով ստանձնել Շուշիի թեմական դպրոցի տեսուչի պարտականությունները:

Վասակ Պապաջանյանը ժամանակի առաջադեմ մանկավարժների մշակած ծրագրերի համաձայն կազմել է ուսումնա-դաստիարակչական մոր ծրագիր, ըստ որի պահանջվել է դրպրոցներում լուրջ ուշադրություն դարձնել մայրենի լեզվի և հին լեզուների (հունարեն, լատիներեն) ուսուցմանը, մեծ տեղ հատկացնել գործնական առարկաների դասավանդմանը, մատաղ սերնդի դաստիարակությանը հաղորդել հասարակական դեր ու նշանակություն և ամենակարևորը՝ դպրոցը դարձնել ժողովրդական լայն զանգվածների սեփականությունը: «Ամեն ժամանակ, ամեն ազգաց մեջ հասարակական կրթությունը,- գրել է նա,- եղել է հայելին ազգային համճարի և հասարակական սովորության, բայց այդպիսի մի հայելի նա կարող է դառնալ միայն այն ժամանակ, երբ նա չէ լինել միայն կառավարչական զեն, այլ կդառնա ազգային սեփականություն, այսինքն, երբ նա կարող կլինի թափանցել ժողովրդի բոլոր խավերը, կազմելով ոչ միայն կառավարչական հոգացողության ու հսկողության առարկան, այլ շարժելով համակրություն ու կոչելով ամեն տեսակ զոհաբերությունը, կդառնա չափահաս ազգի առարկան»²:

Կրթության և դաստիարակության վերաբերյալ Վասակ Պապաջանյանի ունեցած նման հայացքները դուր չեն եկել Արիստակես Սեդրակյանին, և նա փոխել է իր վերաբերմունքը նրա նկատմամբ: Ավելին, սկսել է հալածել ուսուցչին և մեղադրական բողոք է ուղարկել հոգաբարձությանը, որի հիման վրա էջմիածնի սինդոլը ազատել է Վասակ Պապաջանյանին աշխատանքից:

Վասակ Պապաջանյանի տեսչության շրջանը թեև տևել է մեկ տարի, սակայն նշանա-

¹ Տե՛ս ՀՀ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Աշոտ Աթանասյանի արխիվ, թղթ. 71, էջ 1-6, Ս. Ս. Նազարյան, Երևանի պարբերական մամուլը (1880-1917), Երևան, 1986, էջ 45-48:

² «Հայկական աշխարհ», 1879, Բաբու, թիվ 1, էջ 4:

կալի է եղել դպրոցի կյանքում: Նրա օրոք կարգի են բերվել դպրոցի գրադարանն ու տպարանը, ստեղծվել է թատերական խումբ, կանոնավոր հիմքերի վրա են դրվել ուսումնադաստիարակչական աշխատանքները: Պատմաբան Լեոն, բարձր գնահատելով Վասակ Պապաջանյանի մեկ տարվա մանկավարժական գործունեությունը, գրել է. «Ինչ որ պարտավոր է արձանագրել պատմությունը, դա այն է, որ Վասակ Պապաջանյանի միանյա տեսչությունը, եթե միանգամից ամենքին գոհացնող մի ուսումնարանական դրություն չստեղծեց, բայց և հին իրականության շարունակությունը չէր: Ընդհակառակն, դա մի բոլորովին նոր կյանքի առաջին տարին էր: Դպրոցն սկսում էր կազմակերպվել նոր հիմքերի վրա»³:

Վերադառնալով Երևան՝ Վասակ Պապաջանյանը հասարակական կարգով զբաղեցրել է մի շարք պաշտոններ: 1881-1883 թթ. եղել է Երևանի քաղաքային ինքնավարության անդամը, ապա նաև քաղաքազխի պաշտոնակատարը: 1882-1883 թթ. նա էջմիածնի Գևորգյան ճեմարանում վարել է փիլիսոփայության և մանկավարժության դասընթացները:

Վասակ Պապաջանյանը 1880 թվականին Երևանում կազմակերպված «Յայասեր-ազգասեր» գաղտնի խմբի ակտիվ անդամներից էր, խումբ, որի գլխավոր նպատակներն էին ազգային-ազատագրական պայքարի գաղափարների տարածումն ու Արևմտյան Յայաստանի ազատագրումը: Խմբի մյուս անդամներից էին իրավաբան Ռուբեն Ջալալյանը, Վասիլ Եղիազարյանը, բժիշկ Լևոն Տիգրանյանը, մանկական պարտեզի հիմնադիր Գայանե Դովհաննիսյանը, իրավաբան Յայկ Մատակյանը, ուսուցիչ Նահապետ Աթանասյանը և ուրիշներ⁴:

1883 թվականին բացահայտվել է «Յայասեր-ազգասեր» խմբի գործունեությունը, և ցարի հատուկ իրամանով անդամները, նրանց թվում և Վասակ Պապաջանյանը, 1885 թվականին աքսորվել են Կովկասի սահմաններից դուրս՝ Օդեսա և այլ քաղաքներ:

1889 թվականին աքսորավայրից վերադառնալուց հետո Վասակ Պապաջանյանը, Երևանում չգտնելով հոգեհարազատ միջավայր, բնակության վայր է ընտրել Շաղկաձորը, որտեղ էլ 1893 թվականին կնքել իր մահկանացուն:

Անցած դարի 80-ական թթ. հայ մտավորականները, ինչպես և Վասակ Պապաջանյանը ազգային-ազատագրական պայքարի գաղափարները տարածում էին նաև հրապարակախոսական ակտիվ գործունեությամբ: Վասակ Պապաջանյանը, օգտագործելով այն հանգամանքը, որ Երևանում այդ տարիներին գործում էին Ջաքարիա Գևորգյանի (1874), Աբգար Գուլամիրյանցի (1879) տպարանները, 1879 թ. նոյեմբերին դիմել է Կովկասի փոխարքայության գլխավոր վարչությանը՝ Երևանում հայերեն շաբաթաթերթ հրատարակելու խնդրանքով: 1879 թ. դեկտեմբերի 26-ին հատուկ գրությամբ Կովկասի փոխարքան Վասակ Պապաջանյանին թույլատրել է 1880 թ. Երևանում լույս ընծայել հայերեն պարբերական՝ շաբաթը մեկ անգամ:

Երևանի առաջին պարբերականը՝ «Պսակ» շաբաթաթերթը, լույս է տեսել 1880 թ. մարտի 15-ին, սկզբում «Գրականական, պատմական և մանկավարժական», ապա 1882 թ.՝ «Ազգային, քաղաքական, բանասիրական» ենթավերնագրերով: Շաբաթաթերթի առաջին երկու համարները տպագրվել են Ջաքարիա Գևորգյանի տպարանում, հաջորդ համարները՝ «Պսակ» լրագրի նորաբաց տպարանում: Առաջին տարում թերթը ծեռք է բերել հազիվ 240 բաժանորդ, իսկ 1881 թվականին բաժանորդների թիվը հասել է 500-ի:

Շաբաթաթերթի նյութերը զետեղված են «Գրականական», «Պատմական», «Մանկավարժական», «Մատենագրական», «Թղթակցություններ», «Զննական հայացք», «Խառն լուրեր», «Յայտարարություններ» բաժիններում:

Խմբագրի հայտարարությամբ պարբերականը մատչելի պետք է լիներ հասարակության բոլոր խավերին, հատկապես գյուղական բնակչությանը, ինչպես ինքն է գրել, «Յասարակ ժողովրդին»:

«Պսակ» շաբաթաթերթի լույս ընծայման առթիվ խմբագրությունը ողջունի նամակներ է ստացել ընթերցողներից: Երևանի նահանգի հեռավոր գյուղերից մեկի մի խումբ բնակիչներ գրել են. «Մեր ցանկությունն է, որ «Պսակը» լինի բերան ժողովրդի, խոսի հասարակու-

³ Լեո, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի, Թիֆլիս, 1914, էջ 391:

⁴ Տե՛ս ՀՀ Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Աշոտ Աթանասյանի արխիվ, թրթ. 62, էջ 8:

բյան հոգով, առանց կրքի պատմի շինականի և քաղաքացու ցավերի մասին, նախանձախնդրությամբ հարվածի շահամուլներին, որոնք հասարակությանը կեղեքում են հարստահարելով»⁵: Իսկ Մոսկվայի Պետրովսկու անվան գյուղատնտեսական ակադեմիայի հայ ուսանողները, ոգևորված շաբաթաթերթի լույս ընծայումով, իրենց ողջույնի խոսքն են հղել խըմբագրին, որտեղ հույս են հայտնել, որ պարբերականը իր ուշադրությունն անպայման կդարձնի տեղական բնակչության սոցիալական, տնտեսական և մտավոր կյանքի խնդիրների վրա և կիրատարակվի «գավառական ու գյուղական ժողովրդի համար»⁶:

«Պսակ» շաբաթաթերթի հրատարակության կազմակերպումը դյուրին չի եղել: Այն չի ունեցել թղթակիցների մշտական ցանց: Առաջնորդողները և հողվածների մեծ մասը գրել է խմբագիրը: Հողվածներ են գրել նաև Թովմաս Միերյանը, Գրիգորիս Երզնկյանը, Հովհաննես Հեթումը, Արսեն Թոխմախյանը և ուրիշներ:

Գրաքննչական կոմիտեի հետապնդումներից խուսափելու համար, ինչպես խմբագիրն է խոստովանել, «... շատ դեպքերում ստիպված է եղել մտածածը, խորհածը ինչպես առանց մի անցաթղթի մարդի՝ փականքի տակ դնել ու միշտ բանտարկել, գրածը, շարադրածը ջըմջել և հավիտյան անհետացնել»⁷:

«Պսակ» շաբաթաթերթում արժարժված հիմնահարցերից մեկը եղել է հայ ժողովրդի ազգային ու սոցիալական ազատագրության խնդիրը: Վասակ Պապաջանյանը առաջնորդվել է Բաֆֆու երկերում հուշարկված այն նշանաբանով, թե արևմտահայ շարժումը առաջ տանելու համար անհրաժեշտ է հատուկ աշխատանք ծավալել արևելահայ գավառներում: Միաժամանակ նա և նրա շուրջ համախմբված մտավորականները, սերտ կապերի մեջ լինելով Մոսկվայի «Հայրենասերների միություն» կազմակերպության անդամների հետ, օգտագործել ու տարփողել են նրանց մշակած ծրագրի դրույթները: «Հայրենասերների միությունը» կոչ է արել «... արյունով զննել ազատությունը և ցույց տալ քաղաքակրթված աշխարհին, որ հայաստանցին ըմբռնել է ազատության գաղափարը և ընդունակ է այդ գաղափարին գոհել իր ունեցածի ամենաքաղցրը, ամենազմիվը - իր սիրելի որդիների կյանքը»⁸:

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, ինչպես և Սան-Ստեֆանոյի կոնֆերանսի և Բեռլինի կոնգրեսի պայմանագրերը հայ մտավորակալության մեծ մասին, այնպես էլ Վասակ Պապաջանյանին հանդգել էին, որ ազատության հասնելու համար պետք է ապավինել սեփական ուժին: «Հայկական խնդիրը, ինքը ժողովուրդն է,- գրել է նա:- Եթե մինչև այսօր հայն անձանոթ էր Եվրոպային, ապա այն պատճառով, որ նա - հայը - կորցրած էր պատվասիրության զգացումը. բայց, երբ փոքր-ինչ ինքն իրեն ճանաչեց, փոքր-ինչ ծայն հանեց, հայկական խնդիրը երևան դուրս եկավ: Ուրեմն ինչպես որ ինքն իր ինքնաճանաչության նորավառ նշույլներով առաջ բերեց իր խնդիրը, նույնպես էլ պետք է ինքն իր ինքնագործությամբ լուծումն տա այդ խնդրին»⁹: Եվ ժամանակն ու պայմանները հասունացած համարելով այդ խնդրի իրականացմանը նախապատրաստվելու համար՝ նա հորդորել է ժողովրդին՝ չհապաղել, օգտագործել պատեհ առիթն ու ժամանակը: Եվ իր միտքը տեղ հասցնելու նպատակով հարմար է գտել մեջ բերել իմաստունի հետևյալ խոսքերը. «Ոչ թե համբերության օգնությամբ, այլ անհամբերության զորությամբն է ժողովուրդն ազատվում»¹⁰: Միանգամայն իրավացիորեն Թ. Խ. Հակոբյանը գրել է. «Դժվար չէ տեսնել, որ հայրենասեր մտավորականը ճիշտ էր հասկացել 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո արևմտահայերի ազատագրության հարցի շուրջը միջազգային դիվանագիտության բարձրացրած աղմուկի սնամեջ լինելը և այն միակ ելքի, համաժողովրդական պայքարի անհրաժեշտությունը, որն իրոք կարող էր հասցնել հաղթանակի, պայմանով, եթե ժողովուրդն իրեն ամբողջությամբ նվիրի այդ սուրբ գործին...»¹¹:

Խնդրի հաջող լուծման երաշխիքը շաբաթաթերթը գտնում էր ազգի բոլոր ուժերի համերաշխ ու համախմբված գործելու մեջ: «Հայ ազգը երկունքի մեջ է,- գրել է «Պսակը», - որպեսզի նա անվտանգ և առողջ մնա, մեզանից մի զոհ է պահանջում, այն է՝ զոհել մեր հին

⁵ «Պսակ», 1880, թիվ 2:

⁶ Նույն տեղում:

⁷ Նույն տեղում, 1883, թիվ 1:

⁸ Տե՛ս Վ. Ա. Պապաջանյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958, էջ 261:

⁹ «Պսակ», 1883, թիվ 7:

¹⁰ Նույն տեղում:

¹¹ Թ. Խ. Հակոբյան, Երևանի պատմությունը (1879-1917 թթ.), Երևան, 1963, էջ 208:

հաշիվները, մեր կամակորությունը, մեր ռիսակալություններն ու թշնամանքները, նա մեզանցից մի երդում է պահանջում. երդվել սիրել միմյանց և այդ սիրո համար նվիրել նաև կյանքը: Նա մեզանցից մի ուխտ է սպասում - ուխտել մի սիրտ, մի հոգի, մի միություն, մի անքակտ միություն կազմել և այսպիսի սերտ միությանը անվախ առաջ գնալ»¹²:

«Պսակ» շաբաթաթերթը ազգային-ազատագրական պայքարի վերաբերյալ իր մտքերը հաճախ արտահայտել է սքողված միջոցներով: Այդ առթիվ շաբաթաթերթը խոստովանել է. «Թող ներեն մեզ հայ ընթերցողները, որ ուլոր-մուլոր ճանապարհներով ենք տանում մեր պատմության ընթացքը, որ երբեմն էլ գուցե անտեղի ավելորդություններ ենք ներս բերում, բայց այդ ամենն էլ խորհրդով ենք անում և ... միևնույն ժամանակ կխնդրեինք, որ խելամուտությանը կարողանային խորհրդավոր գրվածքը, որ դատապարտված է զգույշ ու կցկտուր նախադասությունների միջոցով դուրս ցուլանալ»¹³:

Սակայն խմբագրի օգտագործած այլաբանական միջոցները չեն վրիպել գրաքննության ու շարժողությունից: Արգելվել են առանձին հոդվածներ, համարների մեկ կամ երկու էջեր, ինչպես և ամբողջական համարներ: Ավելին, Կովկասի գրաքննչական կոմիտեն կարգադրել է Երևանի նահանգապետին՝ ի ցույց դնել Երևանի գրաքննիչին, հայտնելով, որ «Պսակի» թիվ 7-ում տպագրվել են անթույլատրելի հոդվածներ, մինչդեռ թիվ 9-ում կրկին անգամ անց են կացվել նույն այդ մտքերը: Գրաքննչական կոմիտեն «Պսակը» համարել է «Ծայրահեղ վտանգավոր ուղղություն ունեցող թերթ»¹⁴:

Չնայած նման հետապնդումներին, «Պսակը» համարձակորեն շարունակել է իր ընթերցողներին ծանոթացնել արևմտահայության սոցիալական, քաղաքական անապահով ու անազատ իրավիճակին, թուրքական կառավարության գործադրած հայահալած քաղաքականությանը: Անդրադառնալով Աբդուլ Չամիդի հրամանով հայկական դպրոցների ու թերթերի փակման փաստին՝ «Պսակը» գրել է. «... այսօր թուրքիան անանոթաբար ձեռք է կարկառում և հայոց դպրոցներին, ուզում է իր ճիրանների մեջ առնել հայոց դպրոցները, ուրիշ խոսքով, հայոց ազգության այդ ծնելարանը, հայոց սերնդի այդ արգանդը, որ ծնլի, ... որ ավերի, փչացնի այդ մայրական, այդ կենսագործ արգանդը»¹⁵: Միաժամանակ շաբաթաթերթը հույս է հայտնել, որ թուրքական կառավարությանը այդ չի հաջողվի, քանի որ հայ ժողովուրդն ունի հերոսական ոգի և գիտի պայքարել ու պաշտպանել իր դպրոցը, իր եկեղեցին:

«Պսակը» Երևանում առաջիններից էր, որ իր գործունեությամբ նպաստեց հայ ժողովրդի ինքնագիտակցության արթնացմանը, որ հրապարակայնորեն տարածեց ազգային-ազատագրական պայքարի գաղափարները, դրանց շուրջ համախմբելով Երևանի ու զավառի ազգաբնակչությանը:

«Պսակ» շաբաթաթերթը իր էջերում լայնորեն լուսաբանել է նաև աշխատավորության սոցիալ-տնտեսական իրավիճակին վերաբերող հարցերը: Անհրաժեշտ է նշել, որ այդ հարցերը քննարկվել են ազգային-ազատագրական պայքարի խնդիրների հետ սերտորեն համակցված: Շաբաթաթերթում պարբերաբար տարփողվել է այն միտքը, թե միայն ազգային-քաղաքական ազատության դեպքում կարելի է հասնել նյութական ու հոգևոր կյանքի բարեփոխման: Այս կարծիքն արտահայտված է անչափ պարզորոշ նաև հետևյալ այլաբանության մեջ. «Ժամանակով աղան հափշտակեց Պարկը, կամենում էր հափշտակել և Չոմախը, բայց չհաջողվեց: Անթիվ ու անհամար աշխատանքներ գործ դրվեցին, որ այդ վերջինը և ս նորանից խլեն, բայց անհնարին էր: Գյուղացին չտվեց, նորան հարկավոր էր այդ Չոմախը: Բանակնությունը նորան ասում էր. տուր Պարկը, բայց պահիր Չոմախը: Չոմախով կարող ես ձեռք բերել Պարկ, բայց Պարկով երբեք Չոմախ: Նա լսեց բանակնությանը, տվեց հափշտակողին Պարկը և պաշտեց սրբի տեղ Չոմախը, Չոմախը... անգին Չոմախը: Այժմ մեր գյուղացին ունի միայն մի Չոմախ, օրհնեալ է փայտն, որով լիցի արդարություն»¹⁶: Մեկնաբա-

¹² «Պսակ», 1883, թիվ 7:

¹³ Նույն տեղում:

¹⁴ Վրաստանի Կենտրոնական պետական պատմական արխիվ, ֆոնդ 480, ց. 1, գ. 579:

¹⁵ «Պսակ», 1883, թիվ 9:

¹⁶ Նույն տեղում, 1880, թիվ 1: Հայտնի հրապարակախոս, հասարակական գործիչ Աշոտ Աթանասյանը Պարկ և Չոմախ բառերը մեկնաբանել է այսպես. Պարկ - հող - հայրենիք, Չոմախ - փայտ - դազանակ - գավազան (տե՛ս ՀՀ Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Ա. Աթանասյանի արխիվ, թղթ. 71, էջ 5-ի տողատակը):

նելով այս այլաբանությունը՝ ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը այն կարծիքն է հայտնել, թե Պապաջանյանի շաբաթաթերթը հասարակական կյանքում վճռական դերը վերապահում էր զենքի ուժին, ազատագրական պայքարին¹⁷:

Վասակ Պապաջանյանը, քաջ ծանոթ լինելով Մ. Նալբանդյանի ստեղծագործություններին և կրելով նրա ազատատենչ հայացքների ազդեցությունը, իր հողվածներում երբեմն էլ օգտագործում էր նրա մտքերը կամ էլ բառացիորեն մեջբերում հատվածներ նրա ստեղծագործություններից, հատկապես «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» և «Նկատողությունը» աշխատություններից: Տպագրելով Մ. Նալբանդյանի այն խոսքերը, թե «... ինքը ազգը յուր ծեռքով պարտական է սերմանել, եթե կամենում է մի օրինյալ և սուրբ հունձ հնձել»¹⁸, «Պսակը» ոգեկոչել է ժողովրդին, հատկապես գյուղացիությանը՝ սեփական ուժերով պայքարել իր կյանքի բարօրության համար, համախմբված հանդես գալ իր վրեժներն ու արժանիքները անիրավորեն ոտնահարողների դեմ:

«Պսակ» շաբաթաթերթը, անդրադառնալով գյուղում տիրող սոցիալական անհավասարությանը, փորձում է մերկացնել գյուղի տերերին, բացահայտել նրանց անիրավ գործերը այսպես. «Աղա ես, ապա և ունես իրավունք ամեն - տալ, ուտել - խմել, պատժել - անարգել, հափշտակել, բամբասել, զրկել, սպանանել, կողոպտել և այլն, և այլն»¹⁹:

Վասակ Պապաջանյանի շաբաթաթերթում խրախուսվել են տնտեսական կյանքի բարեփոխման, գյուղի վերականգնման այն ձևերն ու միջոցները (գյուղատնտեսական ֆերմաներ, կոոպերատիվ կազմակերպություններ, հացի շտեմարաններ, փոխատու-խնայողական ընկերություններ և այլն), որոնք հաջողությամբ կիրառվել են ռուսական և արևմտաեվրոպական երկրներում: «Գյուղական կրեդիտ» հողվածաշարում²⁰ առաջարկվում է Ռուսաստանում գործող փոխատու-խնայողական ընկերությունների՝ օրինակով Երևանի Ասիանում Մույնյան կազմակերպել նման ընկերություններ: «Հողագործական և արհեստակցական ընկերությունների կարևորությունը մեր ազգի համար» հողվածում²¹ բարձր է գնահատվում կոոպերատիվ ընկերությունների դերը տնտեսական կյանքի զարգացման գործում: «Ամեն մի լուսավորված և քաղաքակիրթ ազգի մեջ,- գրում է շաբաթաթերթը,- երբ մեկ անհատի ուժը չի բավականանում որևէ գործ գլուխ բերել, միանում են մի քանի անհատներ, կազմում ընկերություն և սկսում գործել միասին»²²:

«Պսակ» շաբաթաթերթի էջերում քննարկվել են նաև մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հարցերը: Առանձին հողվածներով հանդես են եկել մանկավարժներ Սարգիս Բենյամազարյանը, Սարիբեկ Տեր-Մելիքսեդեկյանցը, Թովմաս Միերյանը, Հովհաննես Հեթումը և ուրիշներ: Շաբաթաթերթը այն կարծիքին էր, թե հայ ժողովուրդը իրականում ազգային դպրոց չունի, իսկ եղած դպրոցները լոկ անունով են ազգային, իրականում կրթության բովանդակությամբ, դաստիարակչական ուղղվածությամբ, ուսումնական ծրագրերով օտարի դպրոցի նմանողություններ են:

Վասակ Պապաջանյանն իր «Երկու խոսք տեղական լեզուների դասատվության առթիվ» առաջնորդող հողվածում²³ քննարկում է ազգային դպրոցում հայոց լեզվի դասաժամերի ավելացման և դպրոցը հայոց լեզվի որակյալ ուսուցիչներով համալրելու հարցերը:

«Պսակը» միաժամանակ հանդես է եկել գյուղական վայրերում մասնագիտական ուսումնարաններ բացելու պահանջով, ուսումնարաններ, իրոնցում սաներին կհաղորդվեին գյուղատնտեսության զանազան ճյուղերի վերաբերյալ տարրական գիտելիքներ:

«Պսակի» կարծիքով ազգային դպրոցը կոչված էր պատսպարելու որոշակի զբաղմունքի և մասնագիտության տեր, ինչպես և ազնիվ, բարի, առաքինի ու հայրենասեր սերունդ հասարակության համար:

«Պսակի» էջերում առանձնապես կարևորվում էր կանանց ու աղջիկների դաստիարակ-

¹⁷ Տե՛ս Մ. Գ. Ներսիսյան, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության հեն 1850-1870 թթ., Երևան, 1955, էջ 252:

¹⁸ «Պսակ», 1880, թիվ 1: Նույնը նաև՝ Մ. Նալբանդյան, ԵԼԺ, հատ. 2, Երևան, 1980, էջ 323:

¹⁹ Նույն տեղում, 1880, թիվ 1:

²⁰ Նույն տեղում, 1882, թիվ 14-17:

²¹ Նույն տեղում, 1881, թիվ 5:

²² Նույն տեղում:

²³ Նույն տեղում, 1882, թիվ 2:

կության դերը հասարակութան զարգացման գործում: Պահանջվում էր նրանց՝ ներգրավել ազգօգուտ ու հայրենամուտ գործունեության մեջ: Այսպես, Հովհաննես Հեթումը իր «Ի՞նչ ենք պատրաստում մենք մեր աղջիկներին» ծավալուն հոդվածում²⁴ առաջարկում է աղջիկներին զինել հասարակական այնպիսի գաղափարներով, որոնք, ինչպես թերթում է գրված, «... ավելի բարձր, թանկ պետք է լինեն նրանց համար, քան կնությունը, մայրությունը, գավակներ մեծացնելը»²⁵: Իհարկե չէր նշանակում, թե հեղինակը անտեսում էր իզական սեռի դաստիարակության գերագույն դերը, ընդհակառակը, նա աղջիկների դաստիարակություն ասելով, միաժամանակ հասկանում էր «ապագա մայրերի իրենց գավակների վերա ունենալիք խնամատարությունն ու բարոյական կրթությունը»²⁶: Ապա նաև պահանջում էր իզական դպրոցների ուսումնական ծրագրերում մտցնել կենցաղավարության և տնտեսավարության վերաբերյալ դասընթացներ: «Ահա այսպիսի կրթությունից հետո, - եզրակացրել է հոդվածագիրը, - հուսալի է, որ մեր աղջիկները կլինեն կատարյալ մայրեր և մենք կունենանք կերպարանափոխված, ազնվացած գերդաստաններ և ժողովուրդ»²⁷:

«Պսակ» շաբաթաթերթում բարձրացվել են նաև թատրոնի, գրադարան-ընթերցարանների, մանկական ծաղկոցների, մշակութային այլ օջախների կազմակերպման վերաբերյալ հարցեր:

«Պսակը» ուներ նաև «Մատենախոսություն», բաժինը, ուր տպագրվում էին գրքերի տեսություններ, գրախոսություններ, գրական-տեսական հոդվածներ և այլն:

«Պսակում» տեղ են գտել նաև գեղարվեստական գործեր, փոքրածավալ պատկերներ, որոնցում դատապարտվել են ազգային գործիչների տգեղ արարքները; ազգի մեծատունների ցոփ ու շվայտ կյանքը: «Սարգիս աղա» պատկերում աղայի կերպարը ներկայացված է այսպես. «Նա կեղեքում, մաշկում էր խեղճ ժողովրդին - սա ոտքի՝ էր կանգնում, երբ աղան անցնում էր, խոնարհ՝ գլուխ էր իջեցնում, երբ նրան պատահում էր...: Նա՛ ամենախաբեբա, տմաքանդ, զզվելի մի հրեշ էր. նա ճգնում էր միամիտ ամբոխին, մզում, քամում ու խմում նրա արյունը - միսն ու ոսկորը դեն զցելով, բայց և դեպուտատ ասես նա էր ընտրվում, պատգամավոր՝ նա, պատվավոր նա...»²⁸:

Իշխանության ղեկավարներին, նահանգային վարչության անդամներին, գյուղի աղաներին և մյուսներին քննադատելու համար «Պսակը» վաստակել է ղեկավար մարմինների թշնամանքը: Եվ ինչպես վկայում են ժամանակակիցները, սկսվել է սպառնալիքի մի ամբողջ շարան «Պսակի» ու նրա խմբագրի դեմ: 1883 թ. մարտին, երբ բացահայտվել է Երևանի «Հայասեր-ազգասեր» ազգային-ազատագրական գաղտնի-խմբակի գործունեությունը, խըմբի մյուս անդամների հետ կասկածի տակ է առնվել նաև Վասակ Պապաջանյանը: Եվ 1884 թ. արգելվել է նրա թերթի հրատարակությունը:

Ամփոփելով, պետք է նշել, որ «Պսակ» շաբաթաթերթը Երևանի առաջին պարբերականը, իր բովանդակությամբ և արժարժած հարցերով գրավել է ժողովրդական լայն զանգվածների ուշադրությունը: Խմբագրությունը շնորհակալական նամակներ է ստացել հայ զավառներից և անգամ օտար ափերից: Այսպես, մշակութային գործիչ Վահրամ Թորգոմյանը Փարիզից ուղարկած իր նամակում գրել է. «Անկեղծորեն կըսեմ ես, թե ինձ հասած թերթերում մեջ Ձեր «Պսակն» իմ մասնավոր համակրությունն է գրաված: Ուշադրությամբ կվերծանեմ նրա ամեն մի էջերը, որոնցում չեն տեսնվիր թեև ոչ գրագիտական բարձր խորհրդածություններ, ոչ գիտական կամ քաղաքական խորին տեսություններ, ուր թեև ոչ Ռանթեն կխոսի, կամ Լամարթինը կնվագի, սակայն հերիք է, որ նոցա մեն մի տողերն հայրենիք կբուրեն, և հայրենյալ գառնաղի ցավերը կողբան և մեր հեռաբնակ հայ գյուղացու ազգային կենաց վրա ծանոթություններ մեզ կհաղորդեն»²⁹:

«Պսակ» շաբաթաթերթը իր հայրենաշունչ հոդվածներով, ազգային և քաղաքական ազատության վերաբերյալ առաջարկած ծրագրերով, քաղաքի և գյուղի աշխատավորության սոցիալական ու տնտեսական թշվառ կյանքի նկարագրություններով մնայուն արժեք է ներկայացնում հայ պարբերական մամուլի և ընդհանրապես մշակույթի պատմության մեջ:

²⁴ Նույն տեղում, 1880, թիվ 15:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Նույն տեղում:

²⁷ Նույն տեղում:

²⁸ Նույն տեղում, թիվ 4:

²⁹ Նույն տեղում, 1883, թիվ 7:

С. С. НАЗАРЯН - Первое периодическое издание Еревана - еженедельник "Псак" (в связи со 120-летием публикации). - Первый печатный орган - еженедельник "Псак" издавался в Ереване в 1880-1884 годы по инициативе и под редакцией прогрессивного армянского интеллигента, публициста и общественного деятеля Васака Пападжаняна. Рождение печати в Ереване стало следствием произошедших в стране в 80-е годы социально-экономических, общественных и политических сдвигов, которыми было обусловлено проникновение в Закавказье капиталистических производственных отношений.

Основные цели "Псака" - распространение идей национально-освободительной борьбы, обсуждение программ, касающихся освобождения армянского народа от турецкого владычества, проведение реформ в социальной и духовной сферах общественной жизни.

"Псак" сыграл свою важную и неоспоримую роль в деле пробуждения национального самосознания трудящихся Еревана и Ереванской губернии. Газета заняла свое достойное место как в истории армянской печати, так и армянской культуры вообще.